ճապոնական կրօնական թափօրները:

Երախաները վախից լաց են լինում: Ու այդ վախը, ելեքտրական հոսանքի նման անցնում է սրտից սիրտ, չրթնքների վրայ դող դնում, մկաններուն մէջ կայծեր զեեղում եւ մրրիկի նման տրորում հոգիները:

Կարմիր բանակայիններից չատերը մօտենում են դռան եւ սպառնական դիրք բռնում: Ուրիշ երիտասարդներ միանում են նրանց:

Ու մինչ սարկաւագների ձայնը հնչում է ուժեղ եւ վստահ, դրսում ջահերը մօտենում են, եւ անհասկանալի բացականչութիւնների միջից լսւում է՝ «ուռռա՛, ուռռա՛»...

Ժողովուրդը խուժում է ներս: «Մի վախէք, մի վախէք», պոռում են ներսը,— հակակրօնական ցոյց է»...

Թափօրը անցնում է եկեղեցու առջեւից առանց կանգ առնելու: Առջեւը չարուած են մի քանի երախաները, հազիւ 10–12 տարեկան, յետոյ գնում են հինգ–վեց բանուոր, իրենց ձեռքին ջահեր բռնած, մի քանի թուրք մոլլաներ փաթթոցաւոր եւ Համալսարանի վեց ուսանողներ: Եկեղեցու առջեւ ջահերը բարձր չարժում են ու պոռում. «Ուռռա՛, Յիսուս ծուռ ա՛»... Մոլլաները ինչ որ բան են ասում թրքերէն, թքնում դէպի եկեղեցու կողմը, բռունցքները կարկառում դէպի երկինք եւ սպառնում:

— Ուռռա՛, Յիսուս ծուռ ա՛...

Ներսը դռան առջեւ կանգնած երիտասարդութիւնը պատրաստ է դիմադրելու վտանգի պարագային: Ծերերը չոքած համբուրում են գետինը, երախաները փաթթուում են կանանց, երիտասարդները սպրդնած խաչ են հանում եւ սպասում: Աչքերն էլ մոմ ունեն իրենց ձեռքին:

Թափօրը բարձրանում է, ծռում, նորից վերադառնում: Այս անգամ կանգ է առնում եկեղեցու դիմաց: «Ուռռա՛, Յիսուս ծուռ ա՛»... «Ընկերնե՛ր, կրօնքը աֆիոն է»... Անկո՛ղ եկեղեցին, անկո՛ղ Յիսուս»... «Ալլահ եօք, Ալլահ եօք»...

Իսկ ներսից լոյսերը յորդում են դուրս, չարականները հնչում են անուշ, եւ պատարագը ոսկէ աստղերի մէջ ճամբայ է բաց անում ու անհունի առջեւ զմայլացած կանգ առնում ու երգում:

Թափօրը հեռանում է դէպի միւս եկեղեցիները: Ժողովուրդը յուզուած յանկարծ ծունկի է գալիս, կանայք լաց են լինում, տղամարդիկ պատերն են համբուրում, բարձրաձայն աղօթում եւ խումբի հետ միասին երգում են՝

Խորհուրդ մեծ եւ սքանչելի...

Յիսուս ծնուել է Բեթղեհեմում:

* * *

Սարկաւագները տնէ տուն աւետիս են ասում:

Հրեշտակները բախում են դռներին ու կռնակը քամիին տալով մոմ վառում:

Երդիքների մէջ հովը երգում է:

Յիսուս քայլում ձիւնի վրայ արծաթէ վառուչներով, եւ Հայաստան երկիրը սպիտակ է, ինչպէս խնճորենու ծաղիկը երկրագնդի ծառի վրայ:

ԽՈՋԸ

Նախկին դիմնազիոնի մեծ չէնքի եաեւ, մի քանի ժամանակից ի վեր, մեծ քանակութեամբ տախտակ են բերել եւ ինչ որ մի բան են շինում: Ի՞նչ են շինում՝ ոչ ոք չի իմանում:

Դանդաղ են: Փայտերը վեր են բարձրացնում, վար են գցում, մի քիչ քերում են, մի քիչ սղոցում, դամում, յղկում, ու օրերով դադար առնում:

Երբեմն, արշինը ձեռքին, գիշատիչ թըռչունի նայուածքով մարդիկ են գալիս՝ նրանք, որ չուկայում ոսկի են ծախում, չափում են, աչ ու ձախ դառնում, կեղտոտ նօտատետրի մէջ, ինչ որ բան արձանագրում, քիթերը աղմըկալից սրբում եւ արագ ու մտահոգ հեռանում:

Զարմանալի է. չինարարական այս ձեռնարկի մասին թերթերը ոչինչ չեն գրում: Հայաստան մի վագոն փայտ է մտել, մի վագոն փա՛յտ, եւ այդ մասին լուռ են, չեն աղմկում, արտաոահման չեն հեռագրում...

Երբ իրազեկ մարդկանցից տեղեկութիւն են ուզում, ուսերը վեր են բարձրացնում, ձեռքերը չարժում, յօնքերը վեր քաշում՝ չգիտեն, ոչինչ չգիտեն:

Հազար տեսակ լուրեր են պտտում:

Ասում են —

Աբովեանի արձանը պիտի բերեն. հնագիտական պեղումներ են անում. Համալսարանի համար լսարան են շինում. նոր թատրոնի հիմ–

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան